

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԽՕՍՔ Ս. ՍԱՀԱԿԻ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊԻ ՅԻ-  
ՇԱՏԱԿԻՆ ՅՈՒՆԿՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ

Լուսացնել դէմքեր, հայոց ոսկեղարի շող-  
շող վայլ ու վառք, որ 1500 տարվայ հնոււ-  
թեան ետեկց ձեր համայն պայծառութեամբ,  
ձեր հոգու համակ վեհութեամբ կանգնած  
էք մեր մտքի առաջ. որ ձեր հեռատես աչ-  
քերի ազնիւ բիբերով գեռ նայում էք հա-  
յոց կիսաքանդ աշխարհին, հսկում այն ազ-  
գի վրա, որ դուք վերստին ծնաք, դաս-  
տիարակեցիք, պահեցիք, ձեր տաք շնչովը  
ջնուցիք, Սահակ ու Մեսրոպ, Մեսրոպ ու  
Սահակ, բիւր բերան վառք ձեզ, հազար  
ծնրադրութիւն ձեր առջետ

Ահա այն վառ լապտերով, որ դուք տը-  
ւիք մեր ձեռքը, դարերի խաւար ճամբէն  
լուսաւորելով այսօր դէպի ձեզ ենք զալիս.  
զալիս ենք տեսնելու մեր նախնեաց տառա-  
պանքի օրերը, տանջալից կեանքը, հրւանդ  
հայութիւնը, որին դուք բժշկեցիք, գերեզ-  
մանի բերանից դէպի կեանքը դարձրիք:  
Դալիս ենք մեր սրտի լաւագոյն խունկը  
բուրելու ձեր առաջ, այն գողարիկ անուշ  
լեզուով ներբողելու ձեզ, որով բուժեցիք  
մեր համրութիւնը, որով զարդարեցիք մեր  
բերանը, որով շանթահարեցիք թշնամուն,  
որով քաղցրացրիք մեր քիմքն ու կեանքը:  
Փառք ձեզ, հայոց փոքրիկ աշխարհի մեծ  
հերոսներ:

Մէջ լիռներով երկնացած, ահեղ ձորերով

ու հովիտներով երկրացած ու գաշտացած  
վանդակածե կտրտված մի երկիր, նման  
մեղրահացի բճիճների, ուր հայ ժողովուրդն  
էք ապրում: Որքան հովիտ, այնքան կզզիա-  
ցած գաւառ, որքան լեռ, այնքան իշխան  
ու նախարար, առանց բարոյական ու քա-  
ղաքական միութեան, անհաշտ, նախանձոտ,  
ատող ու անխաղաղ: Մի տգէտ ժողո-  
վուրդ, տնտեսապէս կողոպտված էր իշ-  
խանների ձեռքով, անմիտիթար, երերուն,  
անհաստատ: Կորել էր հաւատը դէպի հին  
հեթանոսական հայ աստուածները, թագա-  
ւորել էր հայոց աշխարհում անբարոյական-  
անհաւատութիւնը դէպի բարին ու գեղե-  
ցիկը:

Սյս քաղաքական, տնտեսական, կրօնա-  
բարոյական անկման ու տգիտութեան հե-  
տեանքով հայոց աշխարհը օտարների աս-  
պարէզ էր դարձած: Պարսիկ, յոյն ու հոօ-  
մայեցի իրանց սևաթոյր զօրքերով, իրանց՝  
քանց աստղերն անհամար էքէօններով մըր-  
րիկներից հեք, թռչուններից թև առած  
գալիս, փռվում են ու մորեխի պէս ծած-  
կում հայոց լեռ ու հովիտ, աւերում, կոր-  
ծանում երկիրը, գերի վարում ժողովրդին,  
օրաւուր միմեանց ետեկց ու միմեանցից  
գաւառներ խլում, ազգերի ցանկից օր-ա-  
ւուր ջնջում հայ ժողովրդի անունը, խլում  
նրա ձեռքից գոյութեան իրաւաթուղթը և  
և այս չարիքի մէջ նպաստաւոր էին նրանց  
հայ լաւաճան նախարարները, ստոր հայ  
մատնողները, փառասէր վատերը:

Անմիտիթար, լքեալ, արիւնազանդ ահա-  
ւորութիւնից սարսափահար հայը ոչ մարմնի,

ոչ հոգու միմիթարութիւն ունէր. դրսից՝  
վիրաւոր, ներսից՝ ախտաւոր:

Քրիստոնէութիւնն ահա այս վիճակի մէջ  
գտաւ Հայաստանը, որ երկու ճանապարհով,  
նաև՝ Ասորիքի, ապա Փոքր-Ասիայի վրա-  
յով իր բարոյական-կրօնական կենդանարար  
շողերով մեր աշխարհը մտաւ:

Հոգեոր միմիթարութեան կարօտ հայ ժո-  
ղովուրդը զրկարաց ընդունեց քրիստոնէու-  
թեան առաքեալներին, իր թագ ու պատի ար-  
քայի՝ Տրդատի վլխաւորութեամբ փարզեց  
հայոց աշխարհի Մեծ կուսաւորչին: Աւետա-  
րանը որպէս բարոյական-կենցաղական օ-  
բէնապիրք ընդունեց, որի վրա պիտի զաս-  
տիարակվէր հայը: Քրիստոնէական մէրը,  
հեղութիւնը, յոյսը, զթութիւնը սպեղանին  
եղան հայ ժողովրդի վիրաւոր հոգուն, որ  
հիւանդ էր ատելութեամբ, ախտաւոր՝ հապար-  
տութեամբ, ցաւագար՝ անդթութեամբ, ախ-  
տածէ՛ անյուսաւութեամբ:

Քրիստոնէական առաքինութիւնները ա-  
ռաջ բերին անձնազոհութեան հոգի յանուն  
գաղափարի, հերոսներ հանդէս եկան, նա-  
հատակներ, մարտիրոսներ, որոնց հաւատ  
ներշնչվեց, թէ զոհաքերութիւնը միայն կեն-  
ցաղական-բարոյական օրէնքի պահանջ չէ,  
որ փրկութիւն չը շահելու դէպքում կարող  
է որպէս յուսահատութիւն փովել հերոսա-  
կան ոգու վրա, այլ կենդանի Աստուծու  
պահանջ, որ հերոսներին վարձատրում է իր  
նոր ու անանց թագաւորութեան մէջ: Եւ  
այս հաւատը հային ազնիւ սխրագործու-  
թիւնների ճանապարհի վրա գրեց:

Սակայն հայը իր զիրն ու զրականու-

թիւնը չունէր. յոյներն ու ասորիք յոյն ու  
ասորի քարոզիչներով և քահանաներով լըց-  
րին հայոց աշխարհը: Հայ մանուկ ու ծեր,  
այր ու կին Աւետարան լսում ու կարդում  
էին ասորիքին և յունարէն: Ոչ օտար քա-  
րոզիչները և ոչ նրանց առաքողները եռանդ  
չէին խնայում յոյն ու ասորի գրով, լեզ-  
ուով, զրականութեամբ սննդել հայոց միտքն  
ու հոգին և օր աւուր վանել հայոց լեզուն,  
սեփական փառքի զիտակցութիւնը, ինք-  
նուրոյն ապրելու ցանկութիւնը հայոց մի-  
ջից: Հային հանում էին հայութիւնից և  
տեղը ասորուն և յոյնին գնում:

Դժբաղդաբար քրիստոնէութիւնը իր ան-  
խան վիճակով չէ ընդունվում ու չէ մնում  
ազգերի մէջ: Ամենայն ազգ իր կրօնի հետ  
միացնում է իր անհատական ու ազգային  
հակումները, աշխարհահայեացը, ձգտում-  
ները, ազգայնացնում է, այնպէս է պաշ-  
տում: Ասորին և յոյնը քրիստոնէութեան  
անուան տակ հայոց աշխարհում յոյնութիւն  
և ասորիութիւն էին տարածում: Բարիք ու  
շարիք չը կայ աշխարհիս վրա. ամենայն  
ինչ բարի է ստեղծված, լոկ գէշ զործա-  
զրութիւնն է, որ բարին չար է դարձնում:  
Քրիստոնէութիւնը բացարձակ բարիք է,  
բայց նրանով օտար քարոզիչները ջնջել  
կամեցան հայութիւնը: Եւ առաջ նրանց ցա-  
նած սերմերից մեր ազգի կործանումն էր  
ծնում:

Զարիքներն երկու տեսակի, երկու բնոյթ  
ունեն. կամ կայծակի յանկարծահան շանթի  
նման ջախջախում, ջնջում են, կամ դարա-  
նակալ որդի նման կրծում, մաշում են ար-

մատները։ Հայութեան գլխին պարսից սուրն  
ու հուրը կայծակի շանթերի նման էր  
կախված։ իսկ յոյնն ու ասորին, որպէս  
դարանակալ որդեր, հայ ժողովրդի զոյուշ  
թեան ծառի արմատն էին մտել՝ կրծելու,  
նրա հոգին՝ ծծելու, նրա բերան՝ լեզուն  
անդամալուծելու։ Օտար քաղաքակրթու  
թեան շունչը թունաւոր, որ հպում էր հայ-  
կական ծաղկի կեանքին, ու թօջում էին  
թերթիկները, որ ձեռք էր մխում՝ դաւկա-  
նում, թօթափում էին տերեաները։

Կոյր էր հայը ու գնում էր դէպի ան-  
դունդ, դէպի վհերն անյատակ, խուլ էր  
հայը ու չէր լսում որոտմունքը արհաւրա-  
լից ամպերի, համր էր հայը ու պատաս-  
խան չունէր բերնում թշնամուն։

Բայց կոյրերը իրանց հոգու աշխարհում  
մի բնապղական լոյս ունեն, խուլերը՝ մի  
խուլ ձայն, համրերը՝ մի ներքին բարբառ,  
նրանք տեսնում, նրանք լսում, նրանք խո-  
սում են մի անգամ անդունդի եղերին,  
ահաւոր առիւծների բաց բերանների առաջ,  
եթէ միայն մեռնելու հիւանդ չեն դեռ  
կարապի մի հատիկ երգն է այդ, բայց  
չնաշխարհնէկ երգ։

Յայտնի աւանդութիւն է, թէ պարսիկ  
զօրքերը պարտված կրեսու թագաւորի ա-  
պարանքն արշաւեցին, ներս խուժեցին թա-  
գապսակ արքայի ներքին սենեակները, և  
մինչ պարսիկ զօրականը իր կացինը բարձ-  
րացրեց կրեսոսի զանգը ցրելու, թագա-  
ւորի ի ծնէ համր որդին հօրն սպառնա-  
ցող վաշնզի սոսկումից հերոսական ջղա-  
ձգութեամբ, հոգու հուժկու թափով, ներ-

քին ալեկոծութեան ահեղասաստ յորձանքով  
քանզից, խորտակեց լեզուի կապանքներին ու  
աղաղակեց սպանչի երեսին, ՈՅետ տար  
ձեռք, անօրէն, չես տեսնում առաջդ աշ-  
խարհի տէք՝ մեծն կրեսոն է կանգնած»։

Յունական ու ասորական նուրբ դիւա-  
նազիտութեան արիւնածարաւ նշտարը վարից,  
պարսկական շառաչող սուրը՝ վերից ցցվել  
ու կախվել էին հայի գիմաց, հայի գլխին  
իր հոգու նըրին թեւերով, իր ջղերի ահեղ  
ցնցումով շարժվեց հայը վասնզի բերա-  
նում, նրա խոցված հոգին ծովերից հողմ,  
լեռներից՝ ոյժ, կայծակից թափ առաւ, ներ-  
քին ուժգնութիւնից արձակվեցին լեզուի  
կապանքները, լնկաւ աչքերի վարագոյրը-  
բացվեցին լսելիքը՝ նա տեսաւ, նա լսեց,  
նա որոտաց դարանակալ թշնամիների երե-  
սին, ՈՅետ քաշիր ձեռք, անօրէն, չես  
տեսնում, մեծ հայութիւնն է քո առջև  
կանգնած»։

Այս ալեկոծ հոգու ջղաձգութիւնից, եր-  
կունքի ցաւերից, ներքին տագնապից ծնան  
երկու լուսաշաղ դէմքերը՝ Սահակ ու Մես-  
րոպ, հայոց աշխարհի զուարթուն պահա-  
պանները նրանի կոյր հայութեան բացված  
ազնիւ աչքերի բիթերն են, խուլ հայու-  
թեան՝ բուժված լսելիք, համր հայութեան  
անուշ բարբառը, խիզճ՝ հայութեան, միտ-  
քը լուսաւոր, անեղասաստ ձայնը թշնամի-  
ների երեսին, անմահութիւնը հայութեան։

Երկուսն էլ պալատական անձեր, ժամա-  
նակի օտար գիտութեանց մեծ գիտնական-  
ներ՝ թողին իրանց անձնական փառքը, թո-  
ղեցին իրանց անձնական հանգիստն ու եր-

ջանկութիւնը, անապատականի վերարկուն հագան, մէկը Լուսաւորչի Գահը բազմեց, որպէս փարոս լուսատու, միւսը հայ խաւար ժողովրդի խորունկ խաւերն իշաւ՝ հոգու ճրագն ի ձեւին:

Քարոզեցին Աստուած և հայրենիք Բայց հարկ էր, որ հայ մանուկը հայերէն կարդար, հայ քարոզչին լսէր, հայ փառքերը հայ զրբի մէջ տեսնէր: Տագնապեցին այս խնդրով Սահակ ու Մեսրոպ իրանց հանձարին և Աստուծոյ օգնութեանն ապաւինելով՝ հայոց գիրն ստեղծեցին:

Երանի այն աչքերին, որոնք տեսան այն երկնային հանգէսը երկրի վրա, երբ ս. Մեսրոպը Ս. Գրքի լաւագոյն գիրքը՝ իմաստունի «Ասակացը» թարգմանած ու գրկած Հայաստան նկատ: Հայրապետ ու թագաւոր, իշխան ու ժողովուրդ, մայր ու մասուկ ընդառաջ ելան աստուածաջնորդ առաքեալին, հայոց գիրը համբուրիւ ընդունեցին, ու ցնծաց հայոց աշխարհի իր փրկութեան արշ սլոյսը ողջունելով:

Բազմացան վանքեր, նրանց սիրող զըրկում բուսան հայ վարժարաններ, յանուն հայրենիքի փրկութեան ամուսնաւոր վանականներ ընտանեկան հոգսից ազատ մնալու համար՝ ամուրի հոչակվեցին, անձնատուր եղան վարժապետութեան, վարդապետութեան, գրականութեան, գիտութեան: Հայոց գիրը ողիացաւ ու ոգի տուեց հայութեան: Հայոց վարժարաններն աւարտած ընտիր վանականներ արտաքին գիտութիւնները Հայաստան բերելու համար դեգերեցին Բիւզանդիայի, Աթէնքի, Ալէքսանդրիայի բարձ-

րագոյն գպրոցներում ու լոյս բերին Հայաստան: Յոյն ու ասորի քարոզիչները կնճռոտ դէքերով, կախ ընկած շրթունքներով գրկեցին իրանց աւետարաններն ու գասագրքերն ու ելան Հայաստանից, երբ հայոց աշխարհի փրկութեան շեփորը հայացի հաչեց:

Մեծ Սահակի և Մեսրոպի ցանած սերմերը Վարդանանք Աւարայրի դաշտում հընձեցին, ծաղկեցին սքանչելի ձեռագրերի մէջ որպէս արուեստ ու գեղարուեստ, արձանացան հայ աշխարհի երեսին՝ որպէս սքանչելի ճարտարապետական շէնքեր ու վանքեր, բացվեցին հայ կանանց սրտում որպէս համեստութիւն ու մաքրութիւն, փայլեցին հայ ընտանիքում որպէս ջինջ հայելի՝ որ բիծ չունի, նազանքով օրորվեցին հայոց դաշտերում որպէս սէր ու քաղցրութիւն, հրաշագործեցին որպէս տոկունութիւն, կանգնեցին հայոց աշխարհի սըրտում որպէս փրկարար գրօշակ, որպէս անմահութիւն հայութեան, ծառացան որպէս ազատութիւն, փայլեցին որպէս յոյս, բարձրացան որպէս հաւատ ու կազմեցին, յօրինեցին հայկական սրտերի միութիւնը:

Ազատ էր այժմ հայի հոգին, իսկ երբ ազատ են հոգիները, ծանր չեն ձեռքի շղթաները:

Ահա թէ ովքեր են Սահակ ու Մեսրոպ, որոնց անունն այսօր ցաք ու ցըիւ հայութեանը պահ մի սիրոյ օղակով շղթայիլ ու բերել է ուխտի նրանց սուրբ յիշատակի առաջ:

Բայց ով է տօնում նրանց սուրբ գործի

1500 ամեակը, մՅսք, ի՞նչ բարոյական իրաւունքով. հայ աշակերտը, որի բերնում հայոց լեզուն մեռել է. հայ աղջիկը, որի ականջին հայերէնն անուշ չի հնչում. հայ պատանին, որ հոգու հմայքով չի կարդում՝ ԱՄայրենի լեզու, մայրենի բարբառ, ախնրժ, ընտանի իմ հոգու համար. հայ ծոված, որ շնչում է որդուն՝ Շտղաս, հայերէն մի սովորի, զերմաներէնի ժամանակ չը կայ», հայ գրովը, որ Մեսրոպի սպնիւ բառդիբքը հայհոյանքով ճոխացրեց. հայ կայլնը, որ Մեսրոպի գրով մահավճիռ արձակեց Աթէլ եղոր դէմ. հայ կինը, որի ստինքները ցամաք են իր որդու համար. հայ ամուսինները, որ իրար չեն հանդիպում. հայ տգէտ քահանան, հայ համը ու անարժան վարդապետը, հայ քարացած եկեղեցին՝ որ կենդանութեան ջուր չունի իր ցամքած աղբիւրում. ատելութեամբ փեռեկված հայը, անգրագէտ, անուս, մոլորված զիւղացին, անտարբեր քաղաքացին:

«Ամենիքեան խոտորեցան ի միասին և անպիտանացան»:

Օ՛, լոեմ լաւ է. այլասերման ահաւոր դրուագներ է ցուցահանդէս զրիլ արդի հայութիւնը. և ահա, ահա մթան մէջ տեսնում եմ էլի գալիս են, Հայաստան են զալիս ասորին ու յոյնը, իրանց գրքերն ու աւետարանները գրկած... իսկ պարսիկը՝ իր նիզակն է սրում:

Այս տխուր, այս սրտաճմլիկ պատկերի առաջ մերթ-մերթ այրգած հոգիս դէպի անժահ Մեսրոպի հոգին է կանչում,

«Դու, որ հանճարիդ հզօր թափով երկնքից խլեցիր հայոց զիրն ու Հայաստան բերիր. զնւ, որ գրի տակ հոգի գրիր, առ, առ յետ տար, երկրից երկինք քաշիր քո գիրը, որ էլ հոգի չունի իր մէջ, այլ լոկ մեսցնող տառ է դարձել. չէ որ ասված է. «Գիրն մեռուցանէ, հոգին է որ կեցուցանէ»:

Բայց չէ, չէ... ով վեհ հոգիներ՝ Սահակ ու Մեսրոպ, զթութեան աչքով նայեցէք մեզ վրա ձեր անսահման բարձրութիւնից. ձեր կենդանի շունչը մէկ էլ փչեցէք այս հոգով ոսկրացած ժողովրդի վրա, ու թող կենդանանայ, ու ձեր ցոյց տուած ճանապարհի վրա կանգնի Վատառողջ մթնոլորտից թոյն է ծծում հայութիւնը. ձեր օրհնութիւնը՝ որպէս ղեղթափի զրկեցէք այս հեզ ժողովրդին: Եռուք այդ կարող էք անել, դուք անմահ էք իւալ բանը չէ մեռնում աշխարհում, ոչ հողեղլն, ոչ հոպեղլն. ոչ ձեր մարմինն է մեռած, որ հայ հողերին է յանձնված, որից հոգու և մարմնի սնունդ ենք առնում, ոչ էլ ձեր հոգին, որ ապրում է մեր մտքերի, զգացմունքների, մեր հաւատքի, մեր զիտութեան մէջ: Դուք մեր մէջ և մենք ձեր մէջն ու ձեզանով կենդանի. դուք արմատն ու մենք ձեզնում հաստատված ճիւղեր:

Մշոյ զաշտի ալ վարդ, անթառամ, անուշբոյր զորդ ծաղկունք, մեր նախնեաց արցունքով ցողված, համբոյքներով պաշտոված սուրբեր, օրհնեալ լինի ձեր յիշտակ, փառք ձեզ, անմահ հերոսներ:

Բենիկ վարդապետ